

դաքին վրայ, յանկարծակի զբաղեցրելով: Իրեն կը միանան բազմաթիւ արաբներ: Վերջապէս Յունիս Դին Գահիրէ լուր կը հասնի որ Եալպուզա գետին մէջ խեղդելու է եւ դէմքը ձուկերուն կեր ըլլալուն համար՝ անձանաչելի եղած է: Եալպուզայի սպանալիք ընելը անտարակոյս 15 օրէն աւելի տեւեց. անոր ապստամբութիւնը Մարտ 7էն մինչեւ իր մահուան լուրը Յունիս Դը տեւեց: Վասիլ բան մը չ'ըսեր անոր մահուան մասին, այլ կ'ըսէ որ Եալպուզա «մտաւ յիսրայէլացեցն երկիրն, ու փրթաւ, որ չկարգին իր ուժ աշնել»:

Վասիլ կը պատմէ որ 1400ին Նոյեմբեր 18ին (ըստ իւր ախար Ե (5) «Երալ Մարայ սուլթանն ի Շամրն ու երեկ Հասան Պուզայ սուլթանն յառ սուլթանն յառաջնին (պէտք է ըլլայ Ռեառնեայ, կամ աւելի ճիշտ՝ ար-Ռեառնեայ: Յ. Գ.) ու ասաց, որ Թամուրթանին առել է զՀալապ քաղաքն ու զերդն, ու բռնել ցայիտի սուլթանն, որ Դմըշխայ նայիպ էր»:

Թամուրթան զամառային Ռապի իւլ ախար 3 աշիւնն Նոյեմբեր 19ին, Ասանպուզա, որ զործադիր քարտուղարն էր սուլթանին, Գահիրէ եկաւ լուր բերելով որ Թամուրթանի համաձայնելով Թիմուրթանին հետ՝ զբաւեր է Հալապ իր միջնաբերդով, որուն բնակչութիւնը սրէ անցուցեր է կործանելով կամ ախոռի վերածելով մզկիթներ, եւայլն: Նոյն այդ օրն է որ Սուլթան ան-Նասիր մեկնեցաւ Գահիրէէն եւ իր զօրքով բանակաւեղեց ար-Ռեառնեայ: Դեկտեմբեր 8ին Սուլթանը բանակեցաւ Կազա: Վասիլի յիշած Սայիտի սուլթանն Դամասկոսի (Դմըշխայ) փոխարքան էր, որ զերի բռնուած էր Լանկիթի-մուրէն: Վասիլի յիշողութիւնը աղճատ են եւ անորոշ, որով հոս չեմ արտադրեր: Ամէն պարագայի տակ, ան ցոյց կու տայ որ Սուլթանին զինուորական ոյժը այդ կողմերը խորտակուած էր («չմնաց սուլթանին հիծել»), եւ Թիմուր յառաջացաւ Դամասկոսի վրայ: Վասիլ կը վկայէ որ «Ի Ի 2 (26) Նոյեմբեր(ե)ն ելաւ սուլթանն ի ճամբահ, ու մտաւ կեցաւ ի Ղազէ Ը

(8) օր»:

Արդարեւ Ռապի իւլ ախարի Տին կամ Նոյեմբեր 26ին Ուրբաթ առաւօտուն սուլթանական յառաջապահները ճամբայ ելան դէպի Կազա, ուր միայն Ռապի իւլ ախարի 20ին, աշիւնն Դեկտեմբեր 8ին հասաւ ու բանակեցաւ Սուլթանը, զլիսաւոր բանակով: Սուլթանը Կազայէն մեկնեցաւ Ռապի իւլ ախարի 24ին, աշիւնն Դեկտեմբեր 12ին, եւ Դեկտեմբեր 14ին բանակը մեկնեցաւ դէպի Դամասկոս, ուր հասաւ Դեկտեմբեր 23ին (ճամբատա իւլ էվլէ 6ին):

Ասկէ վերջ Վասիլ Մարաջախտ կը պատմէ իր անձնական փորձառութիւնը այս արշաւանքին մէջ: Կ'ըսէ որ «Ու ելաք ի ճամբահ երկուշարթի յերեկուն, ես հասայ ի Քսուէ առ Թաղրիուերդին, որ Շամրու նայիպութիւնն առել էր ու քան զսուլթանն յառաջ Մարայ հիծելով կու երթին ի Դմըշխ չալիշ՝ Պայիպառսուս ու Տունտաղն ու Նալուզն եւ այլք»:

Արդարեւ Թաղրի Պիրտի կը պատմէ որ իր հայրը Թաղրի Պիրտի մին Պաշպուզա ազ-Ձահիրի, որ էյթամիշի հետ ապստամբեցաւ Սուլթանին դէմ, իր քրոջ շնորհիւ, որ Սուլթանին մայրն էր, ազատեցաւ միւս ապստամբներուն բախտէն, եւ Դեկտեմբեր 8ին Սուլթանէն Դամասկոսի փոխարքայ նշանակուեցաւ, Դամասկոսի փոխարքան Սուլթանը Թիմուրէն զերուցած ըլլալուն համար: Թաղրի Պիրտի դէմ, սակայն, չարախօսութիւն եղաւ, եւ լոկ իրր յառաջապահ Դամասկոս ճամբայ ելաւ Վասիլի Պաշպառսուսի, Տունտաղի եւ Նալուզին հետ: Ասոնցմէ առաջինը Պաշպարսն է, որ Մեծ Գործադիր Քարտուղարն էր, Սուլթանին քրոջ որդին իսկ. վերջինը Նորուզ ալ-Հաֆիդին: Յունուար 8, 1401ին Սուլթան Յարաճ փախաւ Դամասկոսէն քանի մը մամուլներով եւ զընաց Եզրպոսոս, իր բախտին լքելով Դամասկոսը: Վասիլ կը վկայէ որ «զիչերն 2 (6) յունուարն, որ ուրբաթ լուսացաւ է (7) յունուարն փախաւ սուլթանն ու ամէն պարոնայքն»:

Ան ուրեմն քիչ մը կը տարբերի: Վասիլ կը յիշէ որ Սուլթանէն առաջ Դամասկոսէն փախեր էր «Այլպակն

ու այլ պարոնայք»:

Այլպակ Թաղրի Պիրտի կը կոչէ Եալպակ ալ-Ութմանի (Օսմանի): Վասիլ ճիշտ կ'ըսէ որ Թիմուր երկու անգամ հաշտութիւն փորձեց եւ էմիրներէն մերժուեցաւ:

Մարաջախտը 1404 թուականին «ճալմատլովը (ճումատա իւլ էվլէ) զէքտեմբերի է (7) օրն, ի Այլպակ տուտարն, ու սուլթան Համդայի, ըստն ու պայն, ու վեցհաղարապետ պարոնն, ու տապըլ-խանայք, ու Ժ (10) ամիրայք, ու խասակիք, հիծան ու բացին զՀասան սուլթանին ճամայն, ու խլեցին զՊաշպարսին տունն, ու կուլեցան Դ (4) օր ու զնային Ղազէ»:

Արդարեւ Թաղրի Պիրտի ժամանակադրութեան համաձայն՝ արդէն 1403ի ճումատա իւլ էվլէէն (Նոյեմբեր) սկսած Եալպակ իսկապէս զէքտեմբերը սակայն Վասիլի նկարագրած դէպքերը 1404ին Օգոստոսին ծայր տալ սկսան: Օգոստոս 8էն առաջ Սուլթանը հրամայեց որ Եալպակ պարպէ ու հեռանայ Սուլթան Հասանի Մզկիթէն (ճամի), որ ռազմական տիրապետող դիրք մը կը ներկայա-

ցնէր: Եալպակ մերժած էր ատիկա կատարել: Օգոստոս 10ին, Կիրակի, զինուած ըմբոստութիւնը սկսաւ Եալպակի եւ իր համախոհներուն կողմէ Սուլթանին դէմ, եւ տեւեց մինչեւ Հինգշաբթի, Օգոստոս 14: Ուրեմն, ճիշտ է Վասիլի Դեկտեմբեր 7 թուականը. սակայն ճիշտ է որ կուր տեւեց 4 օր: Եալպակի հետ էր Սուլթան ալ-Համդաուի պահակներուն զլիսաւորը, եւ եօթը ուրիշ առաջին կարգի էմիրներ: Սուլթանէն զրեթէ պարտութեան մատնուած Եալպակ ու իր համախոհները, Օգոստոս 14, 1404ին, հեռացան Գահիրէէն եւ Օգոստոս 20ին հասան Կազա:

* * *

Այսքանով կ'աւարտի Վասիլ Մարաջախտի ժամանակադրութիւնը, որ ունի մասին յարմար դատեցի այս քանի մը լուսարանութիւնները տալ: Վասիլի ժամանակադրութիւնը շատ քիչ մանրամասնութիւններ ունի, որոնք Թաղրի Պիրտի քով կը պակսին:

Յ. ԳԻԻՐՏԵԱՆ

ՏԵՐԵՒԱԹԱՓ

Թերեւս ըլլայ, աշնան քաթոս եղանակին, Ամպերուն մէջ վարդագոյն շող մը նրաղուն. ես չը յիշեմ այլեւս աղօթքը ձեռքերուն՝ Որ մանկութեան լուսեղէն գիրքն ինձի բացին:

Գուցէ չըլլայ մէկը վառող սնարիս մօտ ձրագ մը հողէ՝ որ դեռ ժպտի հոգեվարքիս, կամ մրմնջող քաղցր խօսքեր հեռակարօտ՝ Որոնք երբեմն օրօրեցին արտում հոգիս:

Գուցէ չըլլայ ձեռք մը բարի եւ խնկարոյր Աչքերուս դէմ սեւ վարագոյրն իջեցրնող. Մայրքս վաղուց մեռաւ ու ես չունեցայ քոյր...

Միայն պիտի բիրբերուս մէջ արտասուացող, երբոր գայրիմ ցուրտ մութեան ծոցն առ խարխալի, ես ունեմամ տեսիլքն աշնան տերեւաքափ...:

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ